

չըլլալով, ետևէ եղաւ նաև բազմացը նելու իր վարժատանը մէջ հարկաւոր գրքերը, և 1259^և գրքատուն մը շինեց, որուն մէջ հազարէն աւելի ձեռագիր գիրք կը գտնուէր որ նոյն ատենուան համար մեծ բան էր, որոնք երստուն հազար լիրայէն աւելի կ'արժէին, և քիչ ատենէն աւելի ալ շատցաւ :

Հոբերդոս այս իրեն Մատուածաբանի վարժարանը կարգաւորելէն ետքը ուրիշ մըն ալ հաստատեց նախնական գիտութեանց և իմաստասիրութեան համար, որ կոչուեցաւ Փոքր Սորբոն : Բարիզու եկեղեցւոյն կանոնիկոսը եղաւ 1258^և : Իր ամէն բանը ընկերութեան թողուց և սրբութեամբ վախճանեցաւ Բարիզու մէջ 1274^և () փոստ . 15^և, 73 տարուան : Շատ տեսակ գրուածքներ ալ թողուց Հոբերդոս, որոնցմէ ոմանք տպուեցան . մնացածներն ալ Սորբոնեան գրքատունն են . իր դրած կանոնները որոնք 38 յոդուածի մէջ կ'ամփոփուին մինչև հիմայ կեցած են, ու կրնայ ըսուիլ թէ ընկերութեան ոգին էին : Ինչպէս ըսինք՝ աս Սիաբանութեան անդամներուն մէջ եղբայրական հաւասարութիւն մը կը տիրէր . իրենց հին սովորութեանցը վերայ հաստատուն մեծարանքը ու ճշմարիտ եկեղեցական ոգի մը զիրենք պատկառելի կ'ընէր ամենուն առջև : Մտնցմէ ելան չորս դար ետևէ ետև խել մը մեծահամբաւ աստուածաբաններ, որոնք թէ իրենց բարեկրօն վարուքը և թէ գիտութեամբը եկեղեցւոյ ու հաւատոց ախոյեաններն եղան, բարոյականի պահպան, հաւատացելոյ շինութիւն, տղայոց կրթութիւն ու բանտարդեալ թշուառաց՝ միսթարութիւն . վասն զի աս ընկերութեան տիտուր բայց գթալից պաշտօններէն մէկն ալ մահու դատապարտեալ յանցաւորաց կրօնական օգնութիւնները մատուցանելն էր .

Արնանք համարձակ վկայել, Պերժիէի հետ, թէ Եկեղեցւոյ մէջ երևցած բոլոր միաբանութիւններուն մէջ ասոր պէս արդիւնաւոր ու երևելի քիչ տեսնուած է : Եւ ահա այսպիսի մէկ

միաբանութիւն մըն էր զոր Վաղղիոյ խռովութիւնը իր ահագին ալեացը տակ առաւ ծածկեց, հետը մէկտեղ Վաղղիոյ ճշմարիտ մէկ պարծանքն ալ : Եւ խախնամութիւնը՝ Եւրոպէոն Ա կայսեր պահած ըլլալով նորէն Վաղղիոյ դարձնելը իր կորսնցուցած էական մէկ փառքն ալ :



ԱԶԳԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿ

Երիտասարդն Մակարայ վանաց :

Հայաստանի կիսաւեր կամ ամայի վանքերուն մէջ անուանիներէն մէկն ալ է Մակարայ վանքն, Հաղբատայ և Սանահինէ ոչ շատ հեռու, բարձր լեռան մը գագաթը, քարաշէն, սիրուն փորուածքներով, չորս դին պատած անտառներով և ջրերու հեղեղներով : Եկեղեցւոյն մէջ սովորական նուիրատուաց արձանագիրներէն զատ, կայ այս արձանս ալ .

« Եւս մեր գիր յիշատակի՝ սահմանեալ լինի երիտասարդին, որ ՚ի բազում որոգայթից նեղեալ դիմեցաւ Մատուածածինս . և ՚ի նոյն օր յանկարծակի հասեալ հրաման յարարէն՝ անկեալ յերիվարէն ել ՚ի կենցաղոյս . և եթող կսկիծ ծնողաց և ամուսնոյն . և նոքա ետուն զզէնս նորա Մատուածածինս : Վաւիթ (հայր) եւ միաբանքս ետուն նորա ժամ ՚ի տաւնի Հոգւոյ գալստեան » :

Եւս արձանագրիս ընթերցուածը ազգած է մեր աշակերտներէն մէկուն հետեւեալ գրուածս :

Զգին ցնան միտք իմ կարօտեալք յանտառն լռին, որոյ տիրազգեաց միայնութիւն բերէ ինձ սուրբ միսթարութիւն, և անվրդով լուութիւն նորա ծաւալէ զիղձս սրտիս և զձայն հառաչանաց իմոց : Եւ դառք հինաւուրցք՝ ծնունդք պարարտացեալ հողոյ, սփռեն յերկիր զծանրացեալ ոստս և ծածկեն զլոյս արևուն և զձանապարհ պանդրիս :

տին , անդ հողմունք քաղցրածաւաք
 շնչէն յաճախ , և զմայրիս քործի առեալ՝
 երբեմն հեշտալուրս և երբեմն ահա-
 ւորս նուագէն . անտի հնչին շառաչիւնք
 յորդահոսան աղբերց , որոց սկիզբն
 ծածկի 'ի խորս անհեղեղ ժայռից , և
 գեղեցկատոյտ սահեալ ոռոգէն զծե-
 րացեալ արմատս և դայեկէն զմատա-
 ղաբոյս : Ընդ յեզերս նորին կանգնեալ
 կայ նշան խաչին , պաշտեալ երբեմն 'ի
 ճգնագգեաց կրօնաւորաց , որ եռանդուն
 յիշատակօք վառեալ զմիտս մարդոյ ,
 բերելով նմա միանգամայն և երկիւղ
 և պատկառանս , բարձրացուցանէ զնա
 'ի վեր առ Բարիչն իւր :

Սվ բնակարան վսեմ , լուռ , տխուր
 և մթին : Բարձրիկ ահա մերթ զիս
 յապուշ կրթեն , մերթ յերկիւղ ար-
 կանեն և մերթ զուարթացուցանեն :
 Ընտան , սիրեմ ես իօսիլ ընդ քեզ ա-
 ռանձին , ուսո՞ ինձ ուրեմն զլեզու բնու-
 թեան , և թէ չիցեմ բաւական , ան գո-
 նեա՞ 'ի քեզ զսիրտս զգայուն , ընկալ
 զսա և յագեցո զփափաքս սորա : Բայ
 կրկին ինձ յաւելուն զարմանք և զգաց-
 մունք , եթէ յանկարծ ծերունի ոմն
 ծանրաւատակ 'ի մօտակաց վանաց ,
 որ կառուցեալ կայ գեղեցկադիր 'ի սար
 բարձրաբերձ լերին , պարզեալ զճա-
 կատ , ալեօք սպիտակ , քաղցր և յստակ
 ձայնիւ յուշիկս անդ ճեմիցի աղօթե-
 լով : Բայն է Ս անքն Ս ակարայ , որ 'ի
 վաղնջուց կանգնեալ է 'ի նուէր պաշտ-
 պանութեան Ըմենակոյս Սօրն , իբր
 իշխան անտառաց վերամբարձեալ , և
 միաբանակեացք նորին գեղազարդիչք
 են ամայի վայրացս , և անհանգիստ
 մրմունջք սուրբ երգոց նոցա՝ զլու-
 թիւն մայրեացս խափանեն :

Բայ ով իցէ զա՞ որ հեծեալ 'ի խրոխտ
 երիվար փոյթ ընթաց յառաջ դիմէ . փայ-
 լէ աշխոյժ երիտասարդական 'ի դէմն նո-
 րա , գեղեցկագանգուր վարսք նորա յու-
 սոցն 'ի վայր իջանեն , 'ի զէն պնդեալ
 քաջակազմ , և զգեցեալ զբահս որ փայլ
 'ի փայլ վառին 'ի նշուլիցն արևու . փա-
 խուցեալ անշուշտ յաշխարհածուփ հող-
 մոց փութայ խնդրել ապաստանարան

անքոյթ , ուր անցուսցէ զաւուրս յան-
 դորութեան : Պատանի դու , ուստի
 դիմեալ գաս . փորձեցեր զաշխարհ , ե-
 թէ աշխարհ զքեզ փորձեաց . ո՞ ստի-
 պեաց զքեզ թողուլ զնա և մերկանալ
 զփառս զինուց և քաջութեան , և զգե-
 նուլ զհանդերձ վշտաց , և տալ զքեզ 'ի
 լուծ կրօնաւորութեան : Սուտի թու-
 ցեալ նետն այն յանկարծ խոցեաց զսիրտ
 քո կարեւելէր . — յերկնից ձգեաց զնետն
 այն սիրոյ հրեշտակն Սուսանաց , և
 զքեզ զոհեալ , դասեցոյց 'ի գունդս ե-
 րանելեաց . այսուհետև կամիս և դու
 թողուլ անդր 'ի բաց զսէր երկրային և
 առնուլ զհամբոյր ամբիծ սիրոյ :
 Բայ զինչ . զի այսպէս փութով կոչէ
 զքեզ յերկինս . արդեօք ընկալաւ ըզ-
 միայնանալ քո սրտիւ . բաւական հա-
 մարեցաւ զխոնարհաբուխ արտասուս
 աչաց քոց և զդարձ քո միայն 'ի շաւիղն
 արդարութեան : Եւ անդէն յեր-
 կիր անկեալ , որպէս ծաղիկ անանունդ
 և հարեալ յարևէ , անմուռնչ կացեր
 յաւիտեան . մեռա՞ր միայնակ , ոչ զոք
 ունելով քեզ 'ի մխիթարութիւն , բայց
 միայն զյոյս երկնից : . . .

Սանի սուգ զգեցցին սիրտք սիրե-
 լեաց քոց , եթէ եկեալ գտցեն զքեզ՝
 աստ տարածեալ ընդ ստուերաւ մա-
 հուն . յարտօսր գթութեան թացցեն
 զքեզ և ողբասցեն զպատենեկութիւն
 քո՝ որ ոչ բերկրեցաւ և ոչ ինդաց , այլ
 տխրութիւն և ցաւ լոկ եթող 'ի յիշա-
 տակ նոցա : Սայր քո՝ որ մնոյցն զքեզ
 գթով եկեալ 'ի խնդիր որդւոյն , տե-
 սանել 'ի վանս անդ՝ ուր կարծէր զքեզ
 հասեալ և կրօնաւորեալ , գտցէ զքեզ
 անկեալ 'ի ճանապարհին անշունչ , և
 զմարմինդ թողեալ անթաղ : Սհ , քա-
 նի սուգ և դառնութիւն զգայցէ յայն-
 ժամ սիրտն մայրենի , և որպիսի յու-
 սակտուր խորհուրդք պատեսցեն զնա . 'ի
 վերայ լանջաց քոց անկեալ լացցէ զթը-
 շուառ բաղդ քո՝ որ այսպէս դառնացու-
 ցանէ զնա : Սվ մահ անգութ , որ զմա-
 նուկ և զծեր 'ի միասին առեալ տանիս
 'ի խորս շիրմին , եթէ գիտէիր քանի
 մեծ է սէր մայրենի , և քանի առաւել

կակիճ սրտի նորա, և դու իսկ յայնժամ
ժուժել չէիր բաւական :

Եւ յայսպիսի դառն վիշտս զինչ
այլ կացցէ նմա մխիթար՝ որ զորդին
իւր կորոյս սիրեցեալ, զոր խնդրեցէ
հնարս առ 'ի զսուգ անձին սփոփել :
Ժողովեալ զզէնս և զգարդ նորա՝ տանի
'ի վանան ուր հանգերձեալ էր գնալ որ-
դին, և եդեալ 'ի վերայ սրբազան սե-
ղանոյ Տիրամօրն՝ ընծայէ նմա այսպէս
ասելով. « Արօտացաւ որդեակն իմ
գալ այսր և ընծայել քեզ զայսոսիկ,
այլ ոչ կարաց կատարել զուխտ սրտին .
և ահա ես ինքն գամ փոխանակ նորա
բերել և նուիրել քեզ զզէնս նորին ան-
յաղթս . արդ խոնարհեաց դու 'ի բար-
ձանց, մի մերժեր, և ընկալ զսոսա,
որով բազում անգամ պարտեալ վանեաց
նա զհակառակորդս քաջութեամբ բազ-
կին : Եւ քո օգնականութեամբ միայն
զխոտորեալ ընթացս կենաց իւրոց ուղ-
ղեաց, դու բացեալ հեղեր 'ի միտս
նորա զաղբիւրս շնորհաց քոց, որով ե-
հար և խորտակեաց նա զփառս և առ-
ոտն հարեալ արհամարհեաց զաշխարհ .
և դու խնամեցեր զնա գթով, առաւել
քան զիս, ո՞վ Այր գերագոյն . և նո-
րասքանչ մահուամբս փոխեալ 'ի սիրե-
լեաց քո խառնեցեր դասս » :

ՄԿ . ԱՃԵՄԵԱՆ
ԱՂ . ՌԻՄԻ . ՎԱՐԺ .

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Կրակ . և սկիզբն Հրախաղառքեանց :

Հիները արուեստական կրակը չէին
ճանչնար . հրախաղութիւնը նոր գիւտ
մըն է, և թէ որ հիները կը գործա-
ծէին ալ կրակ իրենց տօներուն մէջ,
կրօնական դիտմամբ միայն էր :

Արակը առջի դարերուն մէջ նշան
մըն էր յարգանաց, կամ վախու առիթ
մը : Եստուած ալ այս կերպերով ինքը
զինքը յայտնեց մարդկան . սուրբ Վրոց
մէջ երբեմն կը նմանցընէ զինքը բորբո-

քեալ կրակի մը՝ իր սրբութիւնն ու
մաքրութիւնը յայտնելու համար . եր-
բեմն ալ բռնկած թուփի մը պէս կ'ե-
րևայ, իմացընելու համար որ լափող
կրակի մը պէս ահաւոր է : Աարձեալ՝
երբեմն ծծումբ կ'անձրևէ . և երբեմն
խօսելէն առաջ փայլակներով ժողովը-
դեան ուշադրութիւնը իրեն կը քաշէ :

Արակը երբեմն ալ վսեմութեան նը-
շան էր . ինչպէս Եստուած 'ի նշան ա-
ռաջնորդութի իր ժողովրդեանը՝ կրա-
կէ սիւն մը կը քաջընէր անոր առջևէն :
Թերևս ասկէ շարժած Եստուած թագա-
ւորներն ալ հերոգոտոսի ըսածին նայե-
լով՝ իրենց առջևէն այսպիսի վսեմու-
թեան նշան մը տանել կու տային, այս-
ինքն կրակ : Եւ յս կրակները, ըստ Աուր-
տիոսի, սուրբ և յաւիտենական կը սե-
պուէին, և բանակին դիմացէն կը տա-
րուէին արծրթէ պղտի սեղաններու
վրայ . մոգերն ալ միատեղ կ'երթային
իրենց խորհրդական երգերն երգելով :

Հուլմայեցւոց մէջ ալ կրակը վսե-
մութեան նշան էր, և իրենց տօնից
մէջ կը մտցընէին՝ աւելի կրօնական հան-
դիսի համար քան թէ զուարճութեց :
Արակը միշտ իբրև ամենէն պատշաճ և
սրբազան նիւթը զօհից համար կը սե-
պուէր . այս բանիս մէջ Աբրայեցւոց
կը նմանէին, և մեծ հոգով վառ կրակ
մը պահել կու տային Աեստեան կու-
սանաց : Աերվիոս, Հուլմայ առաջին
եօթը թագաւորներէն մէկը, պատուի-
րեր էր որ Ատալիոյ ամէն քաղաքաց հրա-
պարակներուն մէջ օր մը՝ վարուցանի
կամ հնձուց ժամանակը՝ յարգի կրակ
մը վառուի, ու նոյն օրը իբրև սրբազան
ամենքը հանգիստ առնեն :

Յոյները կանթեղներ կը վառէին 'ի
պատիւ Աթենասայ անոր տօնին օրը,
որ իրենց ձէթ հնարեր էր՝ նոյնպէս 'ի
պատիւ հեփեսոտոսի՝ որ կանթեղ հնա-
րեր էր . և Արոմեթէոսի, որ երկնքէն
գողցած կրակովը իրենց մեծ ծառայու-
թիւնը ըրեր էր : Աւրիշ հանգէս մըն ալ
կը կատարէին 'ի պատիւ Բաքոսի մեծ

1 Ատոնց վրայք Տ . Բաղմավէպ Հտ . ԺԱ . էր . 209 :